ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կ. Վ. ՄԵԼԻՔ-ՓԱՇԱՅԱՆ

Հ. Թումանյանը իր գեղարվեստական երկերում հաղորդում է չափազանց արժեքավոր ազգագրական նյութեր, որոնք կարևոր նշանակություն ունեն մեր հոգևոր և նյութական մշակույթի ուսումնասիրության համար։ Բացի այդ, նա գրել է մեծ թվով ազգագրական բնույթի հոդվածներ, որոնք առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում և նոր խոսք էին ժամանակի ազգագրական գիտության մեջ։ Թումանյանը մեծ չափով նպաստել է նաև ազգագրության զարգացմանը՝ հրապարակային գրավոր և բանավոր ելույթներով պրոպագանդել այն, նպաստել ազգագրական գրականության հրատարակմանը, ֆինանսական միջոցներ հայթայթել «Ազգագրական հանդեսի» տպագրության համար և այլն։

Ազգագրական նյութերի մատուցումը Թումանյանի մոտ հետաքրքիր արտահայտչական ձևեր ունի։ Խ. Աբովյանը, Պ. Պռոշյանը, Ղ. Աղայանը, Հ. Մալխասյանը իրենց գործերում մեծ քանակությամբ ազգագրական նյութեր են տալիս, հաճախ շատ երկար նկարագրելով այս կամ այն ազգագրական պատկերը՝ տոներ. ուխտագնացություններ, հարսանիք, թաղման ծեսեր, և այս հանգամանքը հիմք է տվել որոշ բանասերների նրանց անվանելու կենցաղագիրներ, իսկ Թումանյանը ազգագրական նյութը մատուցում է հերոսների հոգեբանության հետ շաղկապված։ Այդ նյութերը շատ արժեքավոր են, որովհետև ինքը՝ հեղինակը, ապրելով գյուղում, գյուղացիների շրջանում, մոտիկից տեսել ու մասնակից է եղել նահապետական գյուղի գեղչկական կյանքին, նիստուկացին, կենցաղին ու սովորություններին։ Նա մասնակից էր գյուղի ժողովրդական տոներին, ուխտագնացություններին, հարսանիքներին[1]։ Թեև Թումանյանն իր գեղարվեստական ստեղծագործություններում հիմնականում պատկերում է Լոռին, և, ինչպես գրում է Ավ. Իսահակյանը, «Դյուցազնական-նահապետական Լոռին, իր շքեղ բնությունով, իր ավանդներով ու սովորություններով, նրա հինավուրց ժողովուրդն իր կենսահայացքով, իր ցավերով, նաև իր պայքարով՝ ազատության և երջանկության համար, եղան Օհաննեսի ներշնչարանը»[2], բայց ինչպես ճիշտ նկատել է Դ. Դեմիրճյանը, նա իր փոքրիկ գավառի սահմաններից այնքան դուրս եկավ, որ մտավ ողջ հայ ժողովրդի կյանքի սահմանները և իր գավառով ներկայացրեց ողջ հայ ժողովուրդը[3]։

Հ. Թումանյանն իր բանաստեղծություններում և լեգենդներում գեղեցիկ կերպով արտահայտել է գյուղացու նիստուկացը, սովորությունները, աշխատանքային առօրյան, կրոնական հավատալիքները։ Այդ առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում «Գութանի երգը», «Ամառվա գիշերը գյու-

---

1 Ն. Թումանյան, Հ. Թումանյանի մանկությունը և պատանեկությունը, Երևան, 1955, էջ 79։

2 Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. IV, Երևան, 1951, էջ 30։

3 Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատ. VIII, Երևան, 1963, էջ 79։

ղում», «Արև և լուսին», «Հին օրհնություն», «Ճախարակ», «Կալի երգը», «Դժար տարի», «Ողոս-Պետրոս», «Անիծած հարսը», «Լուսավորչի կանթեղը»։ Ազգագրական տեսակետից առանձնակի արժեք ունեն Հ. Թումանյանի նահապետական գյուղը հիանալի կերպով պատկերող «Մարոն», «Լոռեցի Սաքոն», «Հառաչանք», «Անուշ» պոեմները։ Նահապետական գյուղի նշանգրեքի, հարսանիքի, վաղաժամ ամուսնության և նրա դժբախտ հետևանքների հիասքանչ նկարագրություն է տրված «Մարո» պոեմում։

Կրոնական հավատալիքները, սնոտիապաշտությունները ուսումնասիրելու առումով մեծ արժեք է ներկայացնում Թումանյանի «Լոռեցի Սաքոն» պոեմը, ուր կան հետաքրքիր տողեր չարքերի, նրանց մասին եղած պատկերացումների վերաբերյալ։ Քայքայվող նահապետական գյուղի սոցիալական անարդարության, գյուղացու ծանր տնտեսական վիճակի, իրավազրկության պատկերն է նկարագրված Թումանյանի «Հառաչանք» պոեմում։

Ազգագրական նյութերի առատությամբ աչքի է ընկնում հատկապես «Անուշ» պոեմը, ուր ուշագրավ նյութեր կան համբարձման տոնի վերաբերյալ։ Թումանյանն այն նկարագրում է փորձված աղգագրագետի հմտությամբ, բաց չթողնելով և ոչ մի մանրուք.

Համբարձումն եկավ, ծաղկունքը ալվան
Զուգել են հանդեր նախշուն գորգերով.
Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան
Վիճակ հանելու աշխույժ երգերով.
«Համբարձում, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա,
Սև սարեր, յա՛յլա,
Յա՛յլա ջան, յա՛յլա:
Երգ ու բույր խառնած,
Թև-թևի բրոնած
Զուգում են լեռներ,
Ծաղիկ են քաղում,
Ծաղկի հետ խաղում,
Ինչպես թիթեռներ...
Թնդում են երգեր, խրնդում են սրտեր,
Ու շուրջ բոլորած վիճակ են հանում.
Ելնում է մեկին իր երազն ու սեր,
Մյուսի մուրազը սրտումն է մընում:
Պրտույտ է գալիս վիճակը նորից
Քուշուշքը գրլխին ծաղիկ ծաղկամեր,
Թրնդում «ջան գյուղում» մատաղ սրտերից,
Հետը գրվգրվում՝ էն ծաղկոտ սարեր[4]:

Ի դեպ, նշենք, որ, ինչպես վկայում է բանաստեղծի դուստր Նվարդ Թումանյանը, հայրը «տոներից ամենից շատ սիրում էր «Համբարձումը»։ Առավոտ վաղ վեր էր կենում, պահարանից հանում էր բոլոր՝ մոտ երկու տասնյակ, մեծ ու փոքր ծաղկամաններ, լցնում հատկապես դաշտի ու սարի պես-պես ծաղիկ-

4 Հ. Թ ու մ ա ն յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. II, Երևան, 1940, էջ 54—55։

ներով և դնում սենյակների բոլոր սեղաններին ու անկյուններում։ Այս օրվա հետ կապված զանազան ավանդություններ էր կարդում, ջանգյուլումի քառյակներ ասում։ Երբ տրամադրությունը լավ էր լինում ու ժամանակ էր ունենում՝ վիճակախաղ էր բացում։ Սեդիկն էր վիճակ հանողը»[5]։

Աննման է վրձնած հարսանիքի նկարագրությունը «Անուշ» պոեմում։ Շատ հետաքրքիր նյութեր կան նաև սնոտիապաշտության մասին.

— Աղջի՛, վա՛ղիշաղ, թե հոգիդ սիրես.
Մի գարիդ գըցի՛ր, տես ի՞նչ է ասում.
Աչքս խավարի, տեսիլք դառնամ ես,—
Տեսիլք եմ տեսել գիշերս երազում։
Մի մութ ձորի մեջ, մի նեղ ձորի մեջ,
Անբախտ Սարոյի ոչխարը կանգնած,
Լեզու էր ստել ու խաղ էր կանչում,
Ու խաղ էր կանչում ձեն ձենի տրված...[6]

Եվ միանգամայն իրավացի է Հ. Թումանյանի մեծ բարեկամ Վ. Բրյուսովը, երբ գրում է. «Թումանյանի պոեմները (օրինակ «Անուշ») ավելի շատ բան են տալիս ժամանակակից Հայաստանի ու նրա կյանքի մասին, քան կարող են տալ հատուկ հետազոտությունների ստվար հատորները։ Բանաստեղծը մեղմ ու վառ գույներով նկարագրում է հարազատ ժողովրդի կենցաղը, պատկերում է այն որպես արվեստագետ, կերտելով անմոռանալի պատկերներ»[7]։

Ազգագրական նյութերի առատությամբ ետ չեն մնում Թումանյանի պատմվածքները և հեքիաթները, որոնց մեջ բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում «Գիքորը», «Նեսոյի քարաբաղնիսը», «Երկաթուղու շինությունը», «Գելը» և մյուսները։ Հատկապես ուշագրավ է վերջին պատմվածքում հեղինակի կողմից մեջ բերված գիլկապի հետևյալ աղոթքը, որը հազվագյուտ է.

Ալալոս,
Գալալոս,
Գելը կապես երկու բրթով,
Երկու բրթով, երկու մատով,
Աստվածածնա քաղցր կաթով,
Սուրբ Սարգսի ձիու ձարով,
Նաճատակած կարմիր քարով։
Գելի ճամփա մոլոր անեմ,
Գելի ատամ խրմոր անեմ,
Ոտները թուլ,
Ակունքը խուլ...[8]

Զարմանալի դիպուկ է բնութագրել Թումանյանին Ա. Մյասնիկյանը. «Բայց և այնպես, նա կարողացավ մեկուսանալ և խորասուզվեց հայ էպոսի, հայ նահապետականության խորքերը։ Այս բանում նրան օգնեց գյուղը՝ փակված, խուլ,

5 Ն. Թումանյան, Հուշեր և զրույցներ, Երևան, 1969, էջ 45։
6 Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. II, էջ 63։
7 В. Брюсов, Об Армении и армянской культуре, Ереван, 1963, էջ 114։
8 Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. III, Երևան, 1949, էջ 99։

ինքնամփոփ ու հին գյուղը՝ քաջքերով, ավադներով ու պատկառանքով լի՝ երկյուղած, հավատացյալ ու սնոտիապաշտ՝ հրաշքներով, հրաշալիքներով ու կիսավայրենի էակներով հարուստ՝ լուռ ու մունջ ու միապաղաղ գյուղը։ Հայ նահապետականությունը և դյուցազներգությունը Թումանյանին դարձրին խոշորագույն գրող»[9]։

Հ. Թումանյանի ազգագրական բնույթի հոդվածներից առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում նրա ուղեգրությունները՝ «Բորչալվում» խորագրով. այստեղ նկարագրված են Բորչալուի պատմական հուշարձանները, քաղաքները, գյուղերը, այնտեղ ապրող բնակչության՝ հայերի, մալականների, գերմանացիների տնտեսական զբաղմունքները, սովորությունները։ Նկարագրելով Բորչալուի բնական հարստությունները, մյուս կողմից ցույց է տալիս բնակչության տնտեսական ցածր մակարդակը. «Տգետ, վայրենի ու մոլի ժողովուրդը,— գրում է Հ. Թումանյանը,— քայքայվում է բարոյապես և ֆիզիկապես, հալվում, հյուծվում է յուր ծածուկ աղետների մեջ և հոգացող չկա նրա մասին։ Ապրում են կեղտոտ, ավելի կեղտոտ, քան իրենց անասունները. մարդիկ կան, որ մկրտվելիս ավազանում են լողացել, մեկ էլ մեռած ժամանակ պետք է լողացնեն... Հապա ինչպե՞ս չհիշենք արբեցողությունը...[10]։

Հ. Թումանյանը խստորեն դատապարտում է վրիժառությունը, այդ մասին հատուկ հոդված է գրել «Հորիզոն» թերթում. «Խորապես ցավելով պետք է խոստովանենք, որ մեր ժողովրդի մեջ սաստիկ զարգացած է վրեժխնդրության զգացմունքը և մեր մարդը, վրեժ առնելու համար հաճախ կանգ չի առնում ոչ մի միջոցի առջև»[11]։

Զատկի տոնի համառոտ նկարագրությունը կա Թումանյանի «Զատկի առթիվ» գրած հոդվածում[12]։

Թումանյանը նկարագրում է կնոջ ծանր վիճակը ֆիզիկական ու բարոյական առումով։ «Կինն ու մահմեդական պետությունների անկումը» հոդվածում Թումանյանն առաջ է քաշում կնոջ ազատագրման հարցը, նշելով, որ հայը կամ վրացին իրենց կրոնի դարավոր ավանդներով՝ տղամարդուն ու կնոջը մի մարմին, մի բարոյական ամբողջություն են դիտում, մինչդեռ մահմեդականը կնոջը՝ իբրև կյանքի վայելքներից մեկը, փակում է հարեմում և պահապաններ դնում նրանց հսկելու համար։ Նրանց կրոնը թույլատրում է չորս օրինական կին պահել, իսկ հարճ՝ որքան թույլատրեն ֆինանսական միջոցները. «Առհասարակ կարծում են,— գրում է Թումանյանը,— թե հարեմը ստրկություն է կնոջ համար։ Դա սխալ է։ Հարեմը ստրկություն չէ, այլ շատ ավելի ցած ու ամոթալի մի վիճակ։ Ստրուկը կարող է ասել, թե ես աշխատում եմ ու իմ աշխատանքով հա՛մ ուրիշներին եմ պահում, հա՛մ ես եմ ապրում և ավելի շատ ուրիշներն են ապրում իմ աշխատանքով։ Իսկ հարեմի կինը ոչ միայն չի աշխատում ու ոչ ոքի չի պահում, այլ ինքն է ապրում իր էգության հաշվին...»[13]։

Այսպիսով, ամփոփում է Թումանյանը, մահմեդականը կին չունի, կին չունենալով՝ տուն չունի, ընտանիք չունի, բարոյական հարստություն, ամուր

---

9 Ալ. Մարտունի, Հովհաննես Թումանյանի ստեղծագործության սոցիալական արժեքը, Թիֆլիս, 1923, էջ 36—37։

10 Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. VI, Երևան, 1959, էջ 64։

11 Նույն տեղում, էջ 188։

12 Նույն տեղում, էջ 198—199։

13 Նույն տեղում, էջ 209։

հիմք ու ապավեն չունի։ Եվ Թումանյանը գալիս է հետևյալ եզրակացության. «Անկարելի բան է և՛ հարեմ պահել, և՛ առողջ պետություն, անկարելի բան է և՛ հարեմ ունենալ, և՛ հառաջադիմել ու մտնել հառաջադեմ ազգերի շարքը։ Մի հանգամանք, որ արդեն զգում է մահմեդական աշխարհքի ողջամիտ մասը և ձգտում է կանգնել նոր ճանապարհին»[14]։

Առանձնակի նշանակություն ունի Հ. Թումանյանի «Հայկական էպոսի բառարանից» աշխատությունը[15], ուր հեղինակը հանգամանորեն քննության է ենթարկում «Սասնա ծռեր» էպոսը, տալիս նրա անցած շրջանները՝ սկսած հնագույնից։ Ուշագրավ է Թումանյանի անցկացրած հետևյալ զուգահեռը՝ Դավիթ==Հայկին։ Ազգագրական առումով հետաքրքիր է այն հանգամանքը, որ Թումանյանը ձգտում է գտնել Հայկի տոտեմը։ Հայկի տոտեմը նա համարում է արջը։ Այդ միտքը հաստատելու համար բերում է բազմաթիվ փաստեր։ Ի դեպ ասենք, որ Թումանյանը հիանալի ծանոթ էր ինչպես հայ, այնպես էլ եվրոպական, ռուսական ազգագրական գրականության հետ։ Նրա անձնական գրադարանում, ուր կար շուրջ 8000 գիրք, առանձին պահարաններ էին հատկացված ազգագրական գրականությանը։ Այնտեղ կար հայ ազգագրության վերաբերյալ ամբողջ գրականությունը, ռուսական, եվրոպական խոշոր ազգագրագետների՝ Ս. Կովալևսկու, Է. Տայլորի, Ն. Խարուզինի, Գ. Զուրսինի և այլոց աշխատությունները, «Ազգագրական հանդեսի» և «Этнографическое обозрение»-ի բոլոր պրակները։

Ազգագրության բնույթի փայլուն հետազոտություն է Թումանյանի «Խորենացու «Տենչայր Սաթենիկ» հատվածի առթիվ» հոդվածը, որը վերաբերում է Մովսես Խորենացու պատմության մեջ գործածված «Տենչայր Սաթենիկ տիկին տենչանս զարտախուր խավարտ և զտից խավարծի ի բարձիցն Արգավանա» դարձվածքին, որի մեկնաբանությամբ զբաղվել են շատ ուսումնասիրողներ, սակայն ոչ մեկին չի հաջողվել լուծել այդ առեղծվածը։ Ուսումնասիրողներից շատերը «արտախուր», «զտից» բառերը բացատրել են պարսկերենով, իսկ Թումանյանը գտնում է, որ այդ բառերը հայերեն են՝ «արտախուրը» դա լոռեցիների «գաղտակուռ» և զարաբաղցիների՝ «տաղտրկուռ» կոչված բուժբշկական հայտնի բույսն է։ Նա նույն ձևով է բացատրում նաև մյուս բառերը։ Սովորություն կա, ինչպես նշում է Հ. Թումանյանը, որ սիրահարված հայ գյուղացին ում սիրտը, ում սերը ուզում է ձեռք բերել, նրա բարձի մեջ կախարդական զորություն ունեցող ծաղիկներ և խոտեր է դնում և որոշ ժամանակից հետո բարձից հանում իբրև թե նրա հետ և յուր անձկալի սերը։ Այսպիսով, Հ. Թումանյանը հմտորեն օգտագործելով ազգագրական բազմաթիվ նյութեր, հանգել է այն եզրակացության, որ «Արգավանն էլ յուր իշխանական բարձերի մեջ կարող էր ունենալ զանազան ծաղիկներ, որոնք ունեին այլևայլ զորություններ, պահպանում և ներկայացնում էին իշխանի զանազան զգացմունքների ու հատկությունների գաղտնիքները և նրանց գողանալը նույնն էր, թե գողանան նրանց զորությունը։ Այս է, որ ասել են գողթան երգիչները առասպելաբանելով, իբրև թե սիրահարված Սաթենիկը տենչում էր ձեռք բերել Արգամի բարձերից արտախուր, խավարտ և տից խավարծի, այսինքն նրա սերը»[16]։

---

14 Նույն տեղում, էջ 211։
15 Նույն տեղում, էջ 357—388։
16 Նույն տեղում, հատ. IV, էջ 21։

Հ. Թումանյանը Հ. Աճառյանի «Գավառական բառարանի» մասին գրած գրախոսականում մի ուշագրավ միտք է առաջարկում՝ Մասիս բառը նա մակաբերում է մա-մայր (սանսկրիտերեն նշանակում է մայր) աստծու անունից։ Մա անունը նա տեսնում է նաև «Արմավիր» անվան մեջ։ Թումանյանը հավանական է համարում, որ Մասիսը հայոց Օլիմպոսն է, ուր բնակվում էր աստվածների մայրը իր աստվածային ընտանիքով[17]։ «Ազգագրական գործը մեզանում» հոդվածում Թումանյանը գրում է. «Մեր ազգը, որ աշխարհքի ու Արևելքի ամենահին ազգերեն մինն է և ազգագրության տեսակետից հանդիսանում է վերին աստիճանի հետաքրքրական մի աղբյուր ուսումնասիրության, և մեր աշխարհքը, որը մի լիքը թանգարան է ամեն տեսակի կենցաղագիտական, պատմական, կրոնական, բանահյուսական և այլ մեծարժեք նյութերի, տակավին մնում է խավարի մեջ, իրենց փառքերը ավերակների ու հողի տակ, իրենց պարծանքները մոռացության և անհայտության մեջ։ Իրար հետևից, անընդհատ կորչում կամ փչանում են այդ ամենը նոր կյանքի հոսանքների տակ ու նորանոր աղետների մեջ։ Սրա համար էլ մեր աչքում մի առանձին նշանակություն է առնում Թիֆլիսի Հայոց Ազգագրական ընկերությունը իր թանգարանով ու հանդեսով, որն հիմնել է պ. Եր. Լալայանը և իր անդուլ աշխատանքով ճգնում է ծավալել ու ճոխացնել»[10]։

Ելնելով վերոհիշյալից, Թումանյանն առաջ է քաշում ազգագրական նյութերի հավաքման հարցը, կոչ է անում հարուստներին օգնել Հայոց ազգագրական ընկերությանը նյութապես, իսկ ուսուցիչներին՝ հավաքել այդ նյութերը, որոնք կորչում են։ Ազգագրական նյութեր հաղորդողները ծերերն են, որոնց մասին Թումանյանը գրում է. «Սրանց ամեն մեկը ավանդությունների, առասպելների, հին զրույցների, ժողովրդական հավատալիքների մի շտեմարան, մի թանգարան է։ Այս պատմություններից, զրույցներից, սովորություններից շատերը եկած են հին դարերից, մեր հին նախնիքների կյանքն ու սովորություններն են, նրանց մտքի և հոգու ծնունդներն են»[19]։

«Մի երկու խորհուրդ մեր գավառական մամուլին» հոդվածում Թումանյանը դարձյալ առաջ է քաշում ազգագրական և բանահյուսական նյութերի հավաքման հարցը, գրելով. «Մեր Ազգագրական ընկերության կարևորությունը քիչ է հասկացված և քիչ մարդիկ կան նրա մեջ աշխատող։ Ո՞ւր էր, թե մեր Ուսուցչական միությունը, իր ամեն տեղ ցրված անդամ ուսուցիչների ձեռքով մտածեր հավաքել էդ անգին դանձերը»[20]։ Թումանյանի այդ խորհուրդը չի կորցրել իր այժմեականությունը նաև այսօր, մենք պետք է բոլոր ջանքերը գործադրենք բազմահազար ուսուցիչներին ներգրավելու ազգագրական և բանահյուսական նյութերի հավաքման գործում։ Թումանյանը գտնում էր, որ ոչ միայն ուսուցիչները, քահանաները պետք է ծանոթանան ժողովրդի կենցաղին, նյութեր հավաքեն, այլև գրողները նույնպես պետք է զբաղվեն այդ գործով. Փ. Վարդազարյանին ուղղված նամակում նա գրում է, որ գրողը պետք է ուսումնասիրի իր ժողովրդին, նրա սովորությունները, լեզուն, ադաթները, որ ինքն ամեն անգամ սաստիկ զգում է դրանց կարիքը, երբ լինում է ժողովրդի մեջ[21]։

17 Նույն տեղում, էջ 405—406։
18 Նույն տեղում, էջ 146—147։
19 Նույն տեղում, հատ. VI, էջ 65։
20 Նույն տեղում, հատ. IV, էջ 113։
21 «Թումանյանը քննադատ», էջ 88։

Թումանյանը շատ ջերմ վերաբերմունք ուներ դեպի ազգագրական երեկույթները. այսպես, 1911 թ. փետրվարի 2-ին Թիֆլիսի ժողովարանում բժիշկ Ա. Զարգարյանը կազմակերպել էր երեկույթ, ուր ներկայացված էր զոկերեն դրված պիես՝ «Ադաթ չի», ցուցադրվել էին զոկերի տարազը, երգն ու պարը, արտասանում էին զոկերեն բանաստեղծություններ։ Թումանյանը ներկա է եղել այդ երեկույթին և հիացմունքով գրել է. «Ինչքան լավ կլիներ, եթե մեր գավառները իրար ետևից հանդես դային Թիֆլիսում այսպիսի երեկույթներով՝ իրենց առանձին տարազով ու բարբառով, իրենց սարք ու կարգով, վարք ու բարքով, իրենց ադաթով, լավով-վատով, և ի՜նչ հաճույք կտան այս երեկույթները և ինչքա՜ն բան կսովորեցնեն»[22]։

Թումանյանը սերտ կապերի մեջ է եղել հայտնի ազգագրագետներ Եր. Լալայանի, Ստ. Լիսիցյանի, Բենսեի, Ա. Ղլտչյանի և մյուսների հետ։ Նա ամեն կերպ աջակցել է ազգագրական գրականության հրատարակմանը։ Պահպանվել է նրա նամակը ուղղված «Կովկասի հայոց ընկերությանը», ուր գրում է. «Ինձ մոտ է գտնվում թուրքահայ հայտնի ազգագրագետ պ. Տ. Ջիթունու «Արևելյան խաղաշխարհ» աշխատությունը, որ ուղարկելով հարգելի վարչությանը կխընդրեի տալ տպագրության, աչքի առաջ ունենալով նյութերի մեծ կարևորությունն ամեն մի ժողովրդի գրականության համար»[23]։

Երկար տարիներ Հ. Թումանյանն աշխատակցել է Ստեփան Լիսիցյանի «Հասկեր» մանկական ամսագրին։ Թումանյանը բարեկամական կապերի մեջ է եղել ռուս հայտնի ազգագրագետ-բանագետ Բոդորազ-Տանի հետ. 1907 թ. նրանք միասին ազգագրական-բանահյուսական նյութեր են հավաքել Երևանում, Էջմիածնում, Հաղբատում, Սանահինում[24]։ Հ. Թումանյանը կապեր է ունեցել նաև ռուս աշխարհահռչակ ազգագրագետ, սոցիոլոգ պրոֆեսոր Մ. Մ. Կովալևսկու հետ և նրա մահվան կապակցությամբ հետևյալ հեռագիրն է ուղարկել Մոսկվա՝ «Ռուս բանահյուսության սիրողների ընկերությանը». «Հայ գրողների ընկերությունը հայտնում է իր խոր ցավակցությունը ռուսական երկրի պատկառելի գիտնական Մաքսիմ Մաքսիմովիչ Կովալևսկու մահվան առթիվ։

Ի բարօրություն Ռուսաստանում բնակվող բոլոր ժողովուրդների, թող իրականանան հանգուցյալի նվիրական խոսքերը՝ ազատություն, հավասարություն և առաջադիմություն»[25]։

Հ. Թումանյանի բազմաբեղուն ազգագրական գործունեությունը մեծ չափով նպաստել է հայ ազգագրական գիտության զարգացմանը և նրա պայծառ անունը ոսկե տառերով է գրված հայ ազգագրության պատմության մեջ։

---

22 Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. IV, էջ 169։

23 «Հ. Թումանյան. Ուսումնասիրություններ ու հրապարակումներ», Երևան. 1964, էջ 382։

24 Ն. Թումանյան, Հուշեր և զրույցներ, էջ 41։

25 «Հ. Թումանյան. Ուսումնասիրություններ և հրապարակումներ», էջ 385։

ТУМАНЯН И ЭТНОГРАФИЯ

К. В. МЕЛИК-ПАШАЯН

(Резюме)

Писательская, общественная и научная деятельность Ованеса Туманяна во многом способствовала развитию армянской этнографии.

В художественных произведениях Туманяна, являющихся неиссякаемым этнографическим источником, содержатся чрезвычайно ценные этнографические материалы, имеющие важное значение для изучения духовной и материальной культуры армянского народа. Кроме того, им написано множество статей этнографического характера, которые представляют большой интерес и в свое время были новым словом в этнографической науке. Своими публичными выступлениями Туманян во многом содействовал пропаганде этнографических знаний и развитию этнографии, оказал неоценимую моральную и финансовую помощь в деле публикации этнографической литературы, в частности, периодического издания «Азгагракан андес» («Этнографический журнал»).

В своих стихотворениях, поэмах и рассказах Туманян дал прекрасный образ армянского крестьянина с его бытом, традициями и обычаями, с его мировоззрением и темпераментом. Формы подачи этнографического материала у Туманяна весьма интересны и своеобразны. Х. Абовян, П. Прошян, Г. Агаян, О. Малхасян и другие приводят в своих произведениях большое количество этнографического материала, давая порой длинные описания тех или иных сторон быта, а Туманян приводит этнографические материалы в тесном переплетении с образами своих героев, с их характером и поведением и делает это почти незаметно, с большим мастерством.

Примечательно, что Туманян поддерживал тесные связи с такими выдающимися армянскими этнографами своего времени, как Ерванд Лалаян, Степан Лисициан, Бэнсе, Арсен Глтчян и др.